# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի
Հանրապետության Արմավիրի
մարզի Ջրարբի համայնք, ՀՀ, Արմավիրի
մարզ, գ. Ջրարբի ,

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

N 20
*13 փետրվար 2020թ.*

Հարգարժան պարոն Մաթևոսյան.

Ձեզ է ներկայացվում Հայաստանի հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնքի ղեկավարի կողմից 2020թվականի փետրվարի 4-ից մինչև փետրվարի 12-ը ընկած ժամանակահատվածի ընդունած որոշումները:

Առդիր 5 էջ:

**Համայնքի ղեկավար** **Ղազար Ղազարյան**

*Կատ. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Վ. Վարդանյան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ջրարբի, ,

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**04 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 02-Ա**

## ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 12-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով ավագանու 2006թվականի օգոստոսի 18-ի N 01 որոշումը.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնքի 04-086-0005-0023 ծածկագիրը կրող անշարժ գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Ջրարբի համայնք, Հ. Թումանյան փողոց 3-րդ փակուղի 3-րդ շենքի 2-րդ բնակելի տուն հասցեն:

2. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանման կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**Համայնքի ղեկավար՝** **ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ**

20 20թ. փետրվար 04
գ.Ջրարբի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնք

ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ջրարբի, ,

# Ո Ր Ո Շ Ու Մ

**10 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 04-Ա**

## ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի 3-րդ մասով և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1.2020թվականի ապրիլի 5-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնքում սահմանադրության հանրաքվե անցկացնելու համար քարոզչական պաստառները փակցնելու համար համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝

1) համայնքի Պ. Սևակ փողոց 5 հասցեում գտնվող Մշակույթի տան դիմացի պատից 60քառակուսի մետր մակերես.

2) համայնքի Հ. Թումանյան փողոց 14/1 հասցեում գտնվող միջնակարգ դպրոցի պատից 50 քառակուսի մետր մակերես:

2. Սույն որոշման օրինակն ուղարկել լիազոր մարմին, թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով և տարածքի տիրապետողին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**Համայնքի ղեկավար՝** **ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ**20

2020թ. փետրվար 10
գ.Ջրարբի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ջրարբի, ,

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**10 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 03-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասով և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. 2020թվականի ապրիլի 5-ին կայանալիք Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի անցկացման համար տեղամասային կենտրոն սահմանել Ջրարբի համայնքի Մշակույթի տունը, որը գտնվում է Պ. Սևակ 5 հասցեում:

2. Տեղամասային կենտրոնի տարածքի տիրապետող նշանակել <<Ջրարբիի մշակույթի տուն >> ՀՈԱԿ-ի տնօրեն Արփինե Խաչատրյանին:

3.Սույն որոշման օրինակն ուղարկել լիազոր մարմին, թիվ 14 ընտրատարածքային հանձնաժողով և տարածքի տիրապետողին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**Համայնքի ղեկավար՝** **ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ**

20 20թ. փետրվար 10
գ.Ջրարբի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ջրարբի, ,

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**10 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 05-Ա**

## ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻՆ ԱՆՎՃԱՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ԴԱՀԼԻՃ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Ջրարբի համայնքում Սահմանադրական հանրաքվեի հետ կապված միջոցառումներ, ինչպես նաև ընտրողների հետ հանդիպումներ կազմակերպելու նպատակով քարոզչություն կատարողներին անվճար հիմունքներով տրամադրել <<Ջրարբի մշակույթի տուն>> ՀՈԱԿ -ի դահլիճը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**Համայնքի ղեկավար՝** **ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ**

20 20 թ.
փետրվար10
գ.Ջրարբի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ջրարբի, ,

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 06-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքացիական պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության թիվ 633-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2011 թվականի մայիսի 6-ի թիվ 164 որոշման 5-րդ կետը.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Հաստատել հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**Համայնքի ղեկավար՝** ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ

2020 թ.փետրվարի 12
գ.Ջրարբի